

## ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՄ

### ԱՎԱՐԴ ԴԱԶԻՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմը վիթխարի ազդեցություն գործեց Սովետական Միության բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի հոգևոր մշակույթի վրա: Այն իր ներգործության շրջանակները ներառավ հայ ժողովրդական բանահյուսությունը ևս: Հենց սկզբից պատերազմը խթանեց, ի մի բերեց հայ ժողովրդի հավաքական ստեղծագործական ջանքերն ու կարողությունները, նրան մղեց ոգեկոչելու իր հոգևոր գանձարանի բանաստեղծական խորհրդանիշներն ու կերպարները:

1940-ական թվականներին և դրանից հետո ընկած ժամանակաշրջանում պատերազմական թեմատիկան ներթափանցեց կենդանի, ավանդվող բանահյուսության գրեթե բոլոր ժանրերի հյուսվածքը: Նոր ժանրեր շառաչացան, բայց այդ թեմատիկան կարծես նոր շերտ առաջացրեց ավանդական բանահյուսության մեջ. այդ շերտն իր գաղափարական բովանդակությամբ, կիրառության նպատակաուղղվածությամբ, արտահայտչամիջոցների համակարգով ինքնատիպ է ու տարբեր նախորդ շրջանների բանահյուսությունից: Հայրենական մեծ պատերազմին նվիրված բանահյուսական ստեղծագործությունների արժեքի ու նշանակության գիտակցմամբ է, որ մեր մշակույթի երախտավոր գործիչները տակավին պատերազմի առաջին տարիներից ձեռնամուխ եղան դրանք հավաքելու ու գրի առնելու գործին (Ա. Ղանալանյան, Վ. Բղոյան, Ս. Խանզադյան): Երբ ի մի ենք բերում մինչ այժմ գրի առած պատերազմին նվիրված բանահյուսական ստեղծագործությունները, ապա ականհայտ ու դառնում, որ տվյալ թեմատիկան ներթափանցել է առավելապես երգերն ու խաղիկները, զրույցներն ու անեկդոտները, հուշապատումներն ու անեծք-օրհնանքները: Պատերազմական թեմատիկան համեմատաբար ամբողջական ու բազմակողմանի է արտացոլվել քնարական բանահյուսության մեջ, ռազմի և զինվորի, սիրո, օրորոցային ու սգո երգերում, խաղիկներում:

Միանգամայն օրինաչափ կերպով պատերազմին արձագանքեցին ռազմի և զինվորի ավանդական երգերը: Զինվորի հին երգերի որոշ նմուշներ Հայրենական պատերազմի ժամանակ վերաիմաստավորվեցին, փոխակերպվեցին, հարմարվեցին նոր ժամանակների պահանջներին ու ըմբռնումներին: Այդ առումով հատկապես ուշագրավ են «Աղե, գաթա թխիր», «Հասան-Ղալա» ստեղծագործությունները: Վերջինիս նոր, փոխակերպված տարբերակը ժողովրդի բանահյուսական կենցաղում հայտնի է «Կերչի երգը» խորագրով, որի բազմաթիվ տարբերակները գրի են առնվել Հայաստանի բոլոր շրջաններից ու Անդրկովկասի հայաբնակ վայրերից. այն տարածված է եղել ռազմաճակատում և գերության մեջ գտնվող հայ զինվորների միջավայրում: «Կերչի երգի» հետ միասին կենցաղավարման լայն շրջանակներ է ունեցել «Սև ծովի ափին» սկսվածքով նորաստեղծ երգը իր տարբերակներով: Նույն մոտիվներով է հորինված «Աղվանի երգը», բայց տարածման համեմատաբար սահմանափակ շրջանակներով: Այս երգերն ունեն գերազանցապես քնարական բնույթ: Դրանցում պատերազմական իրադարձությունները արժեքավորվում, դիտարկվում են զինվորի անունից ու կողմից: Զինվորի հայեցակետով իմաստավորված ու նրա հոգու հայելու մեջ բեկված են անդրադառնում բոլոր դրական և բացասական երևույթները:

Նշված ստեղծագործությունները հորինվել ու բանահյուսական կենցաղ են մուտք գործել Հայրենական մեծ պատերազմի սկզբնական շրջանում, երբ

ուզմաճակատում իրադարձությունները դասավորվել էին ոչ ի նպաստ Սուվետական Միության: Կարմիր բանակը նահանջում էր. գերմանական բանակը հասել էր Մոսկվայի մատույցներն ու Կովկասյան լեռները: «Կերչի երգում» և «Աղվանի երգում», «Սև ծովի ափին» ստեղծագործության մեջ հիշատակված Ռոստով, Մոզդոկ, Կերչ, Սևաստոպոլ բնակավայրերի շրջաններում 1941—1942 թթ. հայ մարտիկները, հայկական ազգային զորամիավորումները Կարմիր բանակի շարքերում կենաց ու մահու կռիվ էին մղում ֆաշիստական հորդանների դեմ:

Ի տարբերություն նախասովետական շրջանի զինվորի երգերի, «Սևծովյան» շարքի ստեղծագործությունների հրաժեշտի մոտիվներում առկա են հայրենասիրական, քաղաքացիական իմաստ կրող տրամադրություններ.

Մի լա, մայրիկ. մի լա, բույրիկ, հայրենյաց սիրուն,  
Շատի հեա ես էլ քափում եմ արյունը:

Զինվորը նշված երգերում իրեն ներկայացնում է ուզմաճակատային իրադարձությունների մեջ, որոնք դիտվում են ոչ այնքան շոշափելի առարկայական շրջանակներում, որքան հուզական-զգացմունքային առումով, զինվորի կյանքի ու ճակատագրի վրա գործած ազդեցության տեսանկյունից: «Կերչյան», «Սևծովյան» շարքերում, «Աղվանի երգում» տեղ գտած զինվորի զոհվելու մոտիվներից ուշադրավ է հայրենիքի համար մաքառելով զոհվելու մոտիվը՝ իր տարբերակումներով: Զինվորը մեռնում է դիրքերում, սողեսող առաջ գնալու ժամանակ, թշնամու վրա գրոհելիս. մի խոսքով նա ընկնում է մարտընչելիս, ինչպես վայել է քաջ զինվորին.

Նս վրեժն եմ քաջազվեցի,  
Հայրենիքիս զոն զնագի.  
Դիակս Կերչում քաղեցի,  
Խաբե՛ք մոռս, վիբավոր եմ:

Քննարկվող ստեղծագործություններում մարդկային ճակատագրին միահյուսված ներդաշնակ ու համահնչյուն են բնության պատկերները: Բնապատկերի առանցքում հասարակ մարդն է, որի հուզական-զգացմունքային նկարագիրը լրացնում ու ամբողջացնում է այդ բնապատկերը.

Կերչ փաղափր փար ու փոս,  
Գյուլլեն մեջը կֆոֆոս,  
Ուրտիս յարե՛ն կմրմոս...3

Զինվորի նորաստեղծ երգերում ներկայացվում է նոր բնապատկեր, իրական նոր հիմքով, բայց դարձյալ համահնչյուն զինվորի հոգևկան վիճակին: Երգերում առկա բնապատկերները թեև առարկայական չեն, բայց ճշմարտացի են: Այդ բնական միջավայրում են տեղի ունեցել թե՛ իրական-պատմական, թե՛ մտացածին-երգային դեպքերը: Հայ ժողովրդական քնարական բանահյուսությունը այնքան էլ հարուստ չէ ծովային բնապատկերներով: Զինվորի նոր երգերը այդ առումով լրացրին այդ պակասը: Հանգես եկան մի շարք նոր, ողբերգական ենթաիմաստ կրող ծովանկարներ. ծովի ալիքը տխուր լալիս է, ծովը սև արյան լիճ է, ծովի ափին փրփուր չի բռնում, ծովի ջուրը աղի է, ծովի մեջ իրենց մահն են գտնում «անթիվ ընկերներ», զինվորի մեծ եղբայրը, ինչպես նաև ինքը՝ զինվորը: Այս երգերում զինվորը պատերազմի թոհուրոհի մեջ, անձուկ ու անելանելի պայմաններում անզամ մտահոգվում ու անհանգստանում է մոր, ընտանիքի, սիրելիների վիճակով:

1 Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետև՝ ՀԱԻԱ), FFII:0457:

2 ՀԱԻԱ, FFII:0500:

3 ՀԱԻԱ, FFII:0532:

Մայրս ու քույրս բոնուան բոցին,  
 Խորամանկն օգորոցին,  
 Սիրած յարիս ձեռքն էր ձոցին...4

Վիրավոր ու մերձիմահ նա գիտակցում է, թե որքան ծանր պիտի լինի մոր, հոր, հարազատների համար իր մահվան բոթը և պատվիրում է շահյունել նրանց, ցավ չպատճառել նրանց սրտին:

«Կերչյան» շարքի համար «Խաբեք մորս, վիրավոր եմ» տողով արտահայտած միտքը, տրամադրությունը առանցքային են և տարբերակների մեծ մասի կառուցվածքում հանդես են գալիս իբրև տնների վերջին տող, աննշան իմաստային փոփոխություններով: Ընդհանրապես «Կերչյան», «Սևծովյան» շարքերը, «Աղվանի երգը» տողորոված են անսահման սիրով ու գորովանքով դեպի մերձավորները՝ մայրը, հայրը, սիրած կինն ու զավակները, քույրն ու եղբայրը: Այս անանձնական սերը, մարդասիրական ոգին բնորոշ է ինչպես հայ ժողովրդական երգերին, այնպես էլ գրական քնարերգությանը և ունի խոր արմատներ:

«Կերչյան» և «Սևծովյան» երգերի մոտիվներից է նաև հայրենապաշտականը, որը տարբերակներում բացահայտվում է զանազան իմաստային դրսևորումներով: Հայրենաբաղձությունը, կարոտը հայրենի տան, հարազատների, խաղաղ ու շինացնող աշխատանքի նկատմամբ մարդու գիտակցության մեջ մշտապես աղերսվում է հայրենիք հասկացության հետ, տրամադրություններ, որոնք տեղ են գտել հիշյալ շարքերում: Ծվ ապա մինչև արյան վերջին կաթիլը կովելու, հայրենիքի հանդեպ ունեցած պարտքը հատուցելու, սեփական գործի արդարության գիտակցությամբ ու հավատով մարտնչելու տրամադրություններ, որոնց առկայությունը զինվորի նոր երգերը տարբերում է նախասովետական շրջանի երգերից:

Կովի նակատում, մայրիկ ջան,  
 Վիրավորվեցի,  
 Հայրենիքիս սիրո համար,  
 Արյուն րափեցի<sup>5</sup>,

ասում է Հայրենական մեծ պատերազմի մասնակից զինվորը իր երգ նամակում: Կամ.

Կերչի նակատում ես վիրավորվեցի,  
 Հրացանս ձեռքս առա, նորից կովեցի<sup>6</sup>,

Վերը քննարկված երգերի հետ միասին Հայրենական մեծ պատերազմի օրերին կենցաղավարել են մի շարք նորաստեղծ ու ավանդական երգերի փոխակերպված տարբերակներ, որոնք ունեն առավելապես վիպական-հերոսական բնույթ՝ «Դու պինդ մնա», «Օրհնիր ճանապարհս», «Մայրիկ ջան», «Փախիր պուս», «Գիշերով անցա, Դո՛ն, քեզի» և մի շարք այլ ստեղծագործություններում, խաղիկներում պատերազմը դիտված ու արժեքավորված է իր հասարակական նշանակությամբ, արտաքին կողմերով ու փոխհարաբերություններով՝ ի տարբերություն «Կերչյան» և «Սևծովյան» շարքերի: Այս ստեղծագործություններում զինվորի հրաժեշտը շնչում է հայրենիքի պաշտպանության անհրաժեշտության գիտակցությամբ:

Դու պինդ մնա, մայրիկ ջան,  
 Իմ զնալը կորած տեղ չի,  
 Հայրենյաց համար կովելը.  
 Մանե՛նալը կորած տեղ չի<sup>7</sup>:

4 ՀԱԻՐԱՍ, FFII:0574:

5 Գոուսանական և ժողովրդական երգեր, կազմեց Ս. Խանզադյանը, Երևան, 1949, էջ 54:

6 ՀԱԻՐԱՍ, FFII:0457:

7 ՀԱԻՐԱՍ, FFII:0429:

Հայրենիքը վտանգված է, թշնամին պետք է ջախջախվի և դուրս շարտալի հայրենիքի սահմաններից, մի բան, որ չի կարող հաջողությամբ պսակվել առանց զոհերի: Ահա այս գաղափարն ու տրամադրություններն են արտահայտվում «Դու պինդ մնա», «Օրհնիր ճանապարհս», «Մայրիկ ջան» երգերում: Սովետական ժողովրդի արդար գործի ու վերջնական հաղթանակի նշկատմամբ զինվորը լի է անսասան հավատով:

Խոսք չկա, որ մենք կհաղթենք,  
Չար գերմանուն կտապալենք,  
Իսկ քե դաժան կովում բեկե՛նենք,  
Փաշի մահը կորած տեղ չի՞՞:

«Գիշերով անցա, Դո՛ն, քեզի» երգում շոշափելի, իրական կողմերով են պատկերվում ռազմաճակատի մի հատվածում կատարվող ռազմական իրադարձությունները:

Տանկեր զնու՛մ էին արագ,  
Փափակ ունեն դեպի՛ ճակատ,  
Կովում էին ճիշտ ու հաստատ,  
Կիշերով անցա, Դո՛ն, քեզի՞՞:

Իսկ «Փախիր պոռուս» ստեղծագործության մեջ պատերազմը ներկայացվում է ընդհանուր, բնութագրիչ, բայց հակիրճ ու սեղմ եղանակով՝ սկզբից մինչև հաղթական ավարտը: Երգում մի անգամ ևս բացահայտվում է հայ ժողովրդի ավանդական անվերապահ դրական վերաբերմունքը, հավատը ուսզինվորի, նրա տոկոսության, քաջության նկատմամբ:

Հազար իներ հարուր քառսուն մեկ բվին,  
Հանկարճակի գիշեր վրա տվին,  
Էկան տեսան բոբի սվին,  
Հսղերն իրենց գլխին տվին,  
Փախի՛ր պոռուս, էկավ ըստե՛ն10,

Պատերազմական թեմատիկան մարմնավորվեց նաև հայ հերոսների, քաջամարտիկների նվիրված ստեղծագործություններում: Երգեր են հորինվել մարշալ Հ. Բաղրամյանի ռազմական գործունեության, Սովետական Միության հերոսներ Հ. Ավետիսյանի, Ն. Ստեփանյանի և այլոց սխրանքների ու զոհվելու մասին: Երգեր են ստեղծվել նաև սովետական ականավոր զորավարներ Կ. Վորոշիլովի, Ս. Բուդյոննու մասին: Նրանք երգիչների ուշադրությանն են արժանացել իրենց քաջության, խիզախության, անձնվեր հայրենասիրության շնորհիվ: Ընդգծված վիպական ավանդներով են հորինվել Վորոշիլովին, Բուդյոննուն նվիրված երգերը: Զորավարների ռազմավարական տաղանդը, հրմտությունն ի ցույց է տրվում, փառաբանվում հակադիր բովանդակությամբ արված համեմատությունների միջոցով: Հակադրության դրական բևեռում մերն է՝ սովետականը, որն արժանանում է գովքի, մեծարանքի. բացասական բևեռում՝ թշնամի, հակառակորդ կողմի զորավարը, որը նսեմացվում է, անարգվում ու ծաղրվում անխնա:

Վորոշիլովը վերցրեց շաշկան,  
Հիտլերն ընկավ շաշկան,  
Բուդյոննին հույսեց քեզը,  
Հիտլերն ընկավ նեղը11,

8 ՀԱԻՐԱ, FFII:0429,

9 ՀԱԻՐԱ, FFII:0471.

10 ՀԱԻՐԱ, FFII:0439.

11 ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության ժողովրդական ստեղծագործության տան արխիվ (այսուհետև՝ ՓՍՍԱ):

Այս ստեղծագործության այլ տարբերակները հայտնի են մեր հայրենակից, Սովետական Միության մարշալ Հ. Բաղրամյանի անվամբ.

Բաղրամյանը հանեց քառը,  
Հիւրերն ինգյավ ախլի եօրը<sup>12</sup>:

Բաղրամյանին ձոնվել են մի շարք երգեր, որոնցում գորավարի գործունեությունն արժանացել է մեծարանքի, փառաբանության ու ամենաբարձր գնահատականի.

Կեցցե հրեզե Բաղրամյանը,  
Անմահ հերոս Բաղրամյանը<sup>13</sup>:

Բաղրամյանի անունը այնքան սիրված ու տարածված է եղել ժողովրդի մեջ, որ գորավար Անդրանիկին նվիրված ռիթմն արժիվ սավառնում ես» երգը անվանափոխությամբ երգվել է իբրև Բաղրամյանին ձոնված ստեղծագործություն:

Պատերազմական թեմատիկան բազմազան դրսևորումներ ունի խաղիկներում: Հատկապես ուշագրավ են այն խաղիկները, որոնցում տեղ են գտել դինվորի ռազմաճակատային կյանքի ու կենցաղի պատկերները: Գեղարվեստական պարզ կառուցվածքի մեջ բացահայտվում է ռազմաճակատային առօրյան իր բնորոշ արտահայտություններով: Հստ որում խաղիկներում տիրապետում է առույգ, ոգեշունչ, հաղթարշավային տրամադրությունը.

Եղող լեզվի կարիք կաւ,  
Ելա ընկա սարեօար.  
Քտա բերի իմ զերին,  
Խող դլլլա աեղալար.  
Չաւ բշեամու նարը ի՞նչ,  
Կատյաւշայի բյարը ի՞նչ,  
Վառեց, բափեց ու լափեց,  
Նրա դեմ Հիւրեր ի՞նչ<sup>14</sup>:


Զինվորը իբրև մարտիկ օրինական հպարտություն է ապրում իր մասնակցությամբ այս կամ այն ռազմական գործողության, առաջադրանքի հաջող կատարման կապակցությամբ, լի է իր արժանապատվության գիտակցությամբ.

Լիբր բշեամու հալածեցի.  
Քստե քաղաք ազատեցի,  
Օրդեճեհրավ, մեղալեհրավ.  
Հաղրող կու՛ծես գարդաւեցի<sup>15</sup>:

Խաղիկներն անդրադառնում են նաև ռազմաճակատում գտնվող զինվորի ներքնաշխարհին: Զինվորի հիշողության մեջ չի խամրում սիրած աղջկա հետ հանդիպումների տպավորությունը: Պատերազմի դաշտից պատվիրում է նրան հավատարիմ մնալ իրենց սիրուն, սպասել իր վերադարձին.

Անցանք կերչի ջուրը,  
Անցանք կերչի ջուրը.  
Յար չան, եօ հիջեցի.  
Քու աված համբույրը:

12 ՀԱԻՔԱ, ԲԲԻ:0431:  
13 ՀԱԻՔԱ, Թ. Գեորգյանի 1967 թ. լուսվա գործուղում.  
14 ԺՄՏԱ, Վ. Մկրտչյանի Ֆոնդ:  
15 Նույն տեղում:



Աղջի, մարգու շգնաս,  
 Աղջի, մարդու շգնաս,  
 Հաղթանակից ճետո ես  
 Տաւն կգամ, իմսնաս<sup>16</sup>,

Պատերազմական թիմատիկայով երգեր ու խաղիկներ են հորինվել ու կենցաղավարել թիկունքում եւ: Դրանք ասվում—երգվում են զինվորի հարազատների՝ մոր, քրոջ, սիրած աղջկա, կնոջ, երեխաների անունից: Նրանց կողմից են իմաստավորվում պատերազմական իրադարձությունները, նրանց ընկալմամբ են ներկայացվում թիկունքում տեղի ունեցող դեպքերը, որոնք նույնպես անխզելիորեն առնչվում են պատերազմի հետ: Այս ստեղծագործությունների բովանդակությունն արտացոլում է թիկունքի առօրյան, զինվորի հարազատների սերն ու կարոտը, վախն ու մտահոգությունը, հպարտությունն ու նվիրվածությունը կովի դաշտում գտնվող իրենց սիրելիի կյանքի ու գործի համար, նրա սպանության պատճառած վիշտն ու մորմոքը, թիկունքում գտնվողների տոկունությունն ու անձնվիրությունը:

Ձինվորի մայրը, սիրած կինը մշտապես անհանգիստ ապրումների մեջ են բանակ, ուղամաճակատ մեկնած իրենց հարազատի համար: Հատկապես պատերազմի առաջին շրջանում նրանց ողջ ուշադրությունը, մտքերն ու երազները պատվում են զինվորի շուրջը-

Ձաղացս մանի-մանի,  
 Քունըս աեռւ կտանի,  
 Իմ յարը կովի դաշտում,  
 Իմ քունը ոնց կտանի<sup>17</sup>:

Ամեն մի լուր, նամակ ջերմացնում, հանգստացնում է զինվորի հարազատներին, նրանց սիրտն ու հոգին լցնում անսահման գորովանքով, նվիրվածությամբ.

Հայրիկս զնաց բանակ,  
 Բանակին մեռեմ,  
 Գրել էր ինձ մի նամակ,  
 Նամակին մեռեմ<sup>18</sup>:

Երգի մի այլ տարբերակը կենցաղավարվում է սիրած աղջկա, կնոջ անուններով<sup>19</sup>: Պատերազմի դաշտում կովող զինվորի հարազատները (երգերում ու հատկապես խաղիկներում հաճախ են հանդես գալիս մայրն ու սիրած կինը) հետևում են ոչ միայն նրա կյանքին, առողջությանը, այլև նրա գործին, տեղյակ են նրա ստացած շքանշանների, պաշտոնի ու կոչման մասին: Այսպես, մայրը իր երգ-նամակում որդուն ասում է.

Նամակ քստացա, որբի ջան, սաղ ես,  
 Հայկական դվիզում քաջ կոմիսար ես,  
 Որբի ջան, ես քու բանակին մեռեմ,  
 Որբի ջան, ես քու նամակին մեռեմ<sup>20</sup>:

Նույն զգացումներով է ապրում, նույն գիտակցությամբ է օժտված նաև զինվորի կինը: Երկուսի նպատակը մեկ է. ջախջախել թշնամուն ինչքան կարելի է շուտ.

Դու նակատում, ես քիկունքում,  
 Յար ջան,

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> ԺՍՍԱ, վ. Սամվելյանի ֆոնդ:

<sup>18</sup> ՀԱԻՐԱ, ԲԲII:0455:

<sup>19</sup> «Հայ աշուղները և հորինողները Հայրենական պատերազմի օրերին», կազմեց և խմբագրեց Ա. Վշտունի, Սրհան, 1943, էջ 56:

<sup>20</sup> ՀԱԻՐԱ, ԲԲIV:5585:

Հողը զենեք մեր յշնամուն,  
Յար ցունձի:

Թիկունքում գտնվող երիտասարդ աղջիկը կարծես թե ի հեճուկս թշնամու, հպարտությամբ ու արժանապատվությամբ է խոստովանում, որ օիրում է ճակատից վերադարձած վիրավոր զինվորին.

Մտի եյուզը ծոել եմ,  
Քաշկիեակս փոել եմ,  
Քոս Հիոլեքի ինատու՝  
Վիրավորին սիրել եմ<sup>21</sup>:

Խնդրո առարկա երգերն ու խաղիկները անդրադառնում են զինվորի վերադարձին: Ըստ որում զինվորի հարադատների երազանքն է տեսնել նրան՝ կտրծըր շքանշաններով զարդարված, որը և իրականանում է.

Վերացել է պատերազմի փոշին.  
Յարս եկավ՝ շքանշանը դոշին<sup>22</sup>:

Իսկ զինվորի մայրը կուլից վերադարձած որդուն հնավանդ սովորությամբ սառը ջուր է մատուցում, լվանում փոշու ու հոգնած ոտքերը.

Կերյամ աղբյուրը քրի,  
Ու բալես սառ ջուր խմի,  
Հոզնած ոտները լվամ,  
Պսոզեմ սրտով հովանամ<sup>24</sup>:

Վերադարձի, հանդիպման ուրախության հետ միասին նշված ստեղծագործություններում առկա են նաև զինվորի սպանության բոթը՝ պարունակող «սև թղթի» պատճառած ուղբերգությունը արտահայտող մոտիվներ.

Ա՛խ սիրտս էրեցիե, վա՛խ սիրտս էրեցիե,  
Յարս հակատ մտավ, սև բուլբը բերեցիե<sup>25</sup>:

«Սև թուղթը» զինվորի կնոջը կարծես թե մղում է գիտակցված անձնազոհության, մի տրամադրություն, գաղափար, որով համակված են նաև պատերազմի տարիներին կենցաղավարող օրորոցային երգերը:

Օրորոցային երգերի բովանդակությունը պատերազմական թեմայի նկատմամբ եղել է չափազանց զգայուն: Երգի հեղինակներն ու ասացողները եղել են զինվորների մայրերն ու կանայք, որոնք մանկան գովքի մոտիվներին միահյուսել են իրենց սերն ու կարոտը, նվիրվածությունն ու հավատարմությունը՝ զինվորի, և ատելությունն ու անարգանքը՝ թշնամու նկատմամբ.

Խանիկ առա, քունդ տանի,  
Մեր բշնամուն շունը տանի<sup>26</sup>:

Պատերազմական իրադարձությունները դյուրությամբ ներթափանցեցին նաև ավանդական սգո երգերի հյուսվածքը, որոնց բովանդակությունը հիմնականում իմպրովիզացիոն է: Անձանոթ ու հեռու ափերում, անհայտ ու անգերեզման որդու, ամուսնու, սիրած տղայի, եղբոր կյանքն ու վախճանը հիմք հանդիսացան ավանդական սգո երգերի նոր տարբերակների առաջացման համար<sup>27</sup>:

21 «Հայ աշուղները և հորինողները...», էջ 57:

22 ՀԱԻԲԱ, ԲԲII:0459:

23 ԺՍՍԱ, Հր. Հովհաննիսյանի ֆոնդ:

24 «Գուսանական և ժողովրդական երգեր», էջ 68:

25 ԺՍՍԱ, Հր. Հովհաննիսյանի ֆոնդ:

26 ԺՍՍԱ:

27 ՀԱԻԲԱ, ԲԲII:6179:

Հայրենական պատերազմի մասին հորինված երգերում ու խաղիկներում թշնամու կերպարը ներկայացվում է ընդգծված բացասական բնութագրմամբ, արհամարհանքով, ծաղրով ու անարգանքով: Թշնամու կերպարի այսօրինակ նկարագիրը բխում է հայ վիպական բանահյուսության ավանդույթից, որը վերջին հաշվով հառնում է համապատասխան հանգամանքների առկայության դեպքում: Երգում ու խաղիկներում Հիտլեր, Ֆաշիստ անունները այլ կերպ բան անեծքով ու անարգանքով չեն գործածվում: Ժողովրդի բանահյուսական կենցաղում պատերազմական տարիներին տարածված են եղել բազմաթիվ շափածո անեծքներ, անեծքատիպ խաղիկներ, որոնցում նախ և առաջ նսեմացվում են թշնամու ֆիզիկական հատկանիշները՝ շուն, քոռ և այլ նման մակդիրների միջոցով.

Փեշո ցենեմ փռշին,  
Տանեմ բափեմ շռշին,  
Կարմիր գլուխն զիպնի.  
Շուն Հիտլերի դռշին<sup>28</sup>.

Կամ՝

Քանի ջուրը փրվիրի,  
Հիտլերին վեր ունի Բրեյթ<sup>29</sup>.

Անխնա ծաղրի են ենթարկվում ոչ միայն Հիտլերի ֆիզիկականը, այլև նրա ստահոգ մեծամտությունը, ռազմական անճարակությունը, սին նկրտումները մովետական Միության նկատմամբ, ուխտադրժությունը.

Հիտլերն ընկավ ցեխը.  
Աչքը մտավ մեխը,  
Երկու աչքով բռնացավ,  
Իր պայմանը մոռացավ<sup>30</sup>.

Հիտլերի հետ անարգանքի սյունին են դամվում նրա համախոհները, բոլոր ֆաշիստները.

Ցաշխա, ֆաշխա, ֆշֆշան,  
Սև օձի պես բըբըբան,  
Լեշո մեաց շուրբը,  
Քեզի կերան գելեր<sup>31</sup>:

Ժողովրդի վերաբերմունքը Հիտլերի, ֆաշիստների նկատմամբ ունի իր պատճառը. նրանք են պատերազմը հրահրողները, ավերի ու թշվառությունների աղբյուրը.

Աշխարհքը հուր է դառել,  
Աշունը ջուր է դառել,  
Շուն Հիտլերի երեսից.  
Մտերը մուսուտ են դառել<sup>32</sup>.

Թշնամու կերպարի նման բացահայտման հետ միասին իսպառ բացակայում են ռազմատենչ, ռազմամոլ տրամադրությունները: Չկա ոչ մի ստեղծագործություն, ոչ մի տող, որն արտահայտի թշնամու երկիրը զավթելու, ժողովրդին նվաճելու միտումներ: Բոլոր ստեղծագործությունները տողորված են խաղաղասիրությամբ, կարոտով հողը շենացնող, ստեղծագործ աշխատանքի նկատմամբ:

28 ՀԱԻԲԱ, ԲԲԻ:0447.

29 ՀԱԻԲԱ, ԲԲԻ:0449.

30 ՀԱԻԲԱ, ԲԲԻ:0447.

31 ԺՍՍԱ, Վ. Մկրտչյանի ֆոնդ:

32 ՀԱԻԲԱ, ԲԲԻ:0449.



Հայրենական պատերազմին նվիրված երգերը կազմավորվել ու կենցաղավարել են հայ ժողովրդական ավանդական երգերին բնորոշ օրինաչափություններով, սակայն պատմա-հասարակական նոր պայմաններում: Նկատի առնելով քննվող երգերի առաջացման գործոնները, դրանց կառուցվածքում ավանդական երգային հենքի առկայության աստիճանը, կարելի է տարբերակել երկու խումբ. 1) ավանդական երգեր (խաղիկներ), որոնք ենթարկվելով որոշ փոփոխության, անձնանունների, տեղանունների, տարբեքների, նոր երևույթների իմաստ արտահայտող հասկացությունների ներմուծմամբ, հարմարվում են նոր ժամանակների հասարակական-գեղագիտական պահանջներին, 2) նորաստեղծ երգեր, որոնք հորինվել են ավանդական ժանրի շրջանակներում, պահպանելով ժանրին բնորոշ առանձնատկույունները, և նորի հետ միասին օգտագործել են ավանդական որոշ արտահայտչամիջոցներ նոր բովանդակությունը բացահայտելու համար:

Ավանդական ժողովրդական երգերում ընտանիքից, հարազատներից բաժանված, օտարության մեջ գտնվող պանդուխտը հարազատներին լուր էր ուղարկում, տեղեկություն խնդրում կոռնկի միջոցով: Բաժանված կողմերին իրար կապող բանաստեղծական օղակը կոռնկն էր: Կյանքում կատարվող իրական փոփոխությունները (տեխնիկական առաջընթաց, գրագիտության համատարած տարածում) ազդում են ժողովրդի բանաստեղծական ընկալումների ու պատկերացումների վրա: Տակավին XIX դարում թուղթը, գիրը, նամակը մուտք է գործում ժողովրդի բանահյուսական կենցաղը: Երևան են գալիս նամակաձև երգեր: Հայրենական մեծ պատերազմին նվիրված երգերում այս ձևը դառնում է տիրապետող, իբրև կառուցվածք՝ բովանդակությունը բացահայտելու միջոց և բովանդակության տարր: Նամակի ձևով են հորինված «Կերչյան» շարքի բոլոր, «Սևծովյան» երգի մի շարք տարբերակներ և այլ երգեր ու խաղիկներ («Նամակ ըստացա», «Հայրիկս գնաց բանակ» և այլն): Զինվորը ռազմաճակատից նամակ է հղում հարազատներին («Պատմիր նամակ, վիրավոր եմ»), որը երբեմն տեղ չի հասնում՝ «Իմ գրած նամակը՝ ձեզի չի հասնում»: Զինվորը ճակատում հուզմունքով է սպասում թիկունքից եկող նամակին. «Նամակդ էկավ թաց էր, վախ, արցունքով ես գրե, թուղթը հլը թաց էր»: Զինվորի նամակը նաև ուշ է ստացվում. «Երկարեց ժամանակը, երկարեց ժամանակը, փոստե փոստ էր գալիս յարիս նամակը»: Նամակն անսահման ուրախություն է պատճառում զինվորի հարազատներին. «Որթի շան, ես քո նամակին մեռնեմ» և այլն:

Երգ-նամակների կառուցվածքը թելադրում է որոշակի շրջանակներ, սխեմա, որը հիշեցնում է XIX դ. վերջերին և դարասկզբին կենցաղում տարածված նամակները: Բացի այդ, նամակ հասկացությունը երևութական հավաստիություն է տալիս երգերին: «Կերչյան» երգերում հիշատակված ենք գտնում մի շարք անուններ. բաջաղվեցի վրեժ, զանգեզուրցի Գուրգեն, գորիսեցի Երեմ, բայազետցի Գուրգեն, ջաղալեցի Լևոն և այլն, որոնց անունից, առաջին դեմքով, իբրև թե հորինվել են երգերը: Իրականում նամակային ձևը թույլ է տալիս, որ յուրաքանչյուր անուն իր հայրենի տեղանվան հետ մտնի երգի կառուցվածքը, իթե վանկերի քանակը համընկնում է:

Հայրենական պատերազմի երգերում, ինչպես նշվեց, լայնորեն կիրառվել են ավանդական լեզվական, գեղարվեստա-արտահայտչական միջոցներ, ինչպես օրինակ. «Հասան-Ղալեն քար ու քոս», «Կերչ քաղաքը քար ու քոս», «Աղե, գաթա թխի, դիր տանեմ հետս, Ամեն դիրք մտնելիս քեզ գցեմ միտս», «Մալադոյ սալդաթ եմ, սապոզս նեղ ա» և այլն: Ռազմական նոր տեխնիկան, բնական-աշխարհագրական միջավայրը, ընդհանրապես զինվորական կյանքն ու կենցաղը իր նոր դրսևորումներով, խնդրո առարկա երգերում արտացոլվեցին լեզվական նոր միջոցներով ու բանաստեղծական պատկերներով:

Ամփոփելով Հայրենական մեծ պատերազմի շուրջ ստեղծված հայ ժողովրդական երգարվեստի գնահատությունը, կարելի է ասել, որ այն հայ ժողովրդի պատմության մի շրջանի յուրահատուկ տարբերությունն է և օժտված է պատմա-ճանաչողական որոշակի արժեքով: